Մրցույթ՝ «Երևանի հ.160 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի դասվար (8 դասաժամ), «Ֆրանսերեն» (13.5 դասաժամ), «Երաժշտություն» (18 դասաժամ), «Կերպարվեստ» (6 դասաժամ), «Ֆիզկուլտուրա» (55 դասաժամ), «Տեխնոլոգիա» (18 դասաժամ), «Կենսաբանություն» (8 դասաժամ), «Ֆիզիկա» (4 դասաժամ), «Պատմություն» (8 դասաժամ), «Ինֆորմատիկա» (29 դասաժամ), «Հայոց լեզու» (19.5 դասաժամ), «Աշխարհագրություն» (12 դասաժամ) թափուր տեղերի համար

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել.

- Դիմում (Ձեւ 1), մեկ լուսանկար 3x4 չափի,
- Բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ)
- Անձը հաստատող փաստաթուղթ
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը՝ առկայության դեպքում
- Ինքնակենսագրություն (Ձեւ 5)
- Այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ, ՀՀ արական սեռի քաղաքացիները, նաև զինվորական գրքույկ
- Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում), որակավորման տարակարգ ունենալու դեպքում հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են **2025թ. օգոստոսի 26-ից մինչև սեպտեմբերի 8-ը** ներառյալ, ամեն օր՝ ժամը 09:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից: Մրցույթը տեղի կունենա **2025թ. սեպտեմբերի 11-ին՝ ժամը 12:00–ին** Երևանի հ. 160 հիմնական դպրոցում, հասցեն ք. Երևան, Ավանեսովի 10: Տեղեկությունների համար զանգահարել (010) 47-17-00 հեռախոսահամարով: